«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ

Առարկան՝ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հետազոտող ուսուցիչ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ուսումնական հաստատություն՝
Ալավերդու Կարապետ Դոլինյանի անվան N11 միջնակարգ դպրոց

Երևան 2022

Գլխավոր հարցեր

1. Ո՞րն է ընտանիքի դերը հասարակության մեջ, և ի՞նչ ազդեցություն են թողնում ընտանեկան հարաբերությունները սովորողների դաստիարակության և հոգեվիճակի վրա:

2. Որո՞նք են կոնֆլիկտների հիմքերը, և ի՞նչ հետևանքներ են թողնում դրանք սովորողների մոտ:

Բովանդակություն

Ներածություն ---------- 4

Մաս Ա Ընտանեկան հոգեբանություն----------

Գլ 1 Ընտանիքի էությունը, կառուցվածքը, գործառույթները ---------- 6

Գլ 2 Երեխայի դաստիարակությունն ընտանիքում---------- 8

Մաս Բ Կոնֆլիկտներ ----------

Գլ 1 Կոնֆլիկտների էությունը, տեսակներն ու հիմքերը ---------- 10

Գլ 2 Հաղթահարման ուղիները: Կոնֆլիկտների ազդեցությունը սովորողների

ներաշխարհի վրա ---------- 12

Եզրակացություն---------- 13

Օգտագործված գրականություն ---------- 14

Ներածություն

Թեմայի արդիականությունը – Մեր օրերում անհրաժեշտ է ունենալ խելացի, լայն աշխարհայացքի տեր երիտասարդություն և ընդհանրապես հասարակություն, որը կկարողանա դիմակայել ներկա ժամանակների մարտահրավերներին տարբեր ոլորտներում : Եվ ահա այդ վաղվա երիտասարդներն այսօրվա սովորողներն են, որոնք պետք է այդ որակներին հասնեն այսօրվա ստացած կրթությամբ և դաստիարակությամբ դպրոցում, բուհում և առավել ևս ընտանիքում: Ընտանիքը հենց այդ դաստիարակության հիմքն է, որն ապագա երիտասարդը կստանա որպես հիմք վաղվա լիարժեք գիտելիքի, լայն աշխարհայացքի համար: Այս դեպքում սովորողը կդառնա իր երկրի լիարժեք և լիիրավ քաղաքացին: Ահա թե ինչում է կայանում թեմայի արդիականությունը: Սովորողների դաստիարակությունն սկսվում է վաղ մանկության շրջանում, որին հաջորդում են մանկապարտեզը, դպրոցը: Եվ այդ ճանապարհին շատ կարևոր է կրթական հաստատությունների և ընտանիքի համագործակցությունը: Մանավանդ դասղեկը պիտի մշտապես կապ ապահովի ծնողների, ընտանիքի հետ, իմանա սովորողի առանձնահատկությունները, ընտանեկան վիճակը, որտեղ ապրում է սովորողը:

Ընտանիքի ներսում լիարժեք առողջ, հավասարակշռված անհատ ձևավորելու հարցում շատ կարևոր են ներընտանեկան հարաբերությունները, որոնք նպաստում են սովորողի հոգեվիճակի կայուն և ներդաշնակ ձևավորմանը, ինչպես նաև տարբեր արժեհամակարգերի ձևավորմանն ու զարգացմանը: Շատ կարևոր է նաև հետևողական ուշադրությունը, օբեկտիվությունը, սեփական վարքագծով օրինակ ծառայելը՝ վերոհիշյալ նպատակին հասնելու հարցում: Կարևոր է նաև միաժամանակ սիրել երեխային, բայց կարողանալ խիստ լինել, զգալ այդ չափը, սահմանը: Այդ քայլով ծնողները զերծ կպահեն երեխային էգոիզմի հատկանիշների ձևավորումից: Ընտանիքը լուծում է նաև սովորողի սոցիալականացման հարցը: Այս խնդիրը լուծելով՝ սովորողի մեջ կձևավորվեն ինքնուրույն կարծիք արտահայտելու ունակություն, լիարժեքության զգացում: Դրա շնորհիվ սովորողը կյանքում զերծ կմնա կաշկանդված, կաղապարված լինելու մտածողությունից: Հենց ընտանիքում սովորողը պիտի գիտակցի, որ ինքը կոլեկտիվի, ընտանիքի անդամ է, և որ ինքն ունի լիարժեք իրավունքներ կոլեկտիվի մյուս անդամների պես: Միաժամանակ նա պիտի գիտակցի, զգա պատասխանատվություն, պարտավորվածություն ընտանիքի մյուս անդամների նկատմամբ: Ահա այսպիսի սովորողը հետագայում կդառնա պատասխանատու, պատրաստակամ, օգնող մարդ:

Եվ ահա, ելնելով վերոհիշյալ փաստերից, մեկ անգամ ևս արձանագրում ենք, թե ինչքան կարևոր ու արդիական է այս թեման և նրա ուսումնասիրությունը:

Հետազոտության նպատակը - Բազմակողմանի հետազոտության արդյունքում ուսումնասիրել ընտանիքի հոգեբանությունը, պարզել նրա դերը սովորողի դաստիարակության և ապագա լիարժեք քաղաքացու ձևավորման գործում:

Հետազոտության խնդիրները - 1.Նպատակին հասնելու համար կատարել տարբեր ուսումնասիրություններ, օգտվել տարբեր գիտական աղբյուրներից:

2. Մեկնաբանել և արժևորել ընտանիքի ներդաշնակության կարևորությունը սովորողի դաստիարակության ու կայացման գործում՝ որպես լիարժեք մարդու և քաղաքացու:

Մաս Ա

Ընտանեկան հոգեբանություն

Գլուխ 1

Ընտանիքի էությունը, կառուցվածքն ու գործառույթները

Ամուսնությունն ու ընտանիք կազմելը յուրաքանչյուր մարդու կենսական անհրաժեշտությունն է: Այն տղամարդու և կնոջ միջև կամավոր կապն է ողջ կյանքի ընթացքում, որը հիմնված է սիրո և հարգանքի վրա: Ամուսնությամբ ձևավորվում է ընտանիքը՝ ընդհանուր տանիքի տակ ապրող արյունակից հարազատների խումբը, որը հիմնականում գոյանում է ամուսնությամբ: Այն և՛ սոցիալական կառույց է, և՛ սոցիալական խումբ: Որպես կառույց՝ ընտանիքում առաջ են գալիս յուրահատուկ հոգեբանական հարաբերություններ ընտանիքի անդամների միջև, որոնք առաջին հերթին ունեն բարոյական հիմքեր: Սակայն երբեմն դրանք արտահայտվում են իրավական ակտերով և օրենքներով: Որպես խումբ՝ ընտանիքում ապրող մարդիկ ունեն նույն նպատակները, առաջնորդվում են նույն արժեքներով՝ ի շահ բոլորի: Փաստորեն ընտանիքում գործում են մշտական կապեր, կարծիքների բախում: Այսպիսի ընտանիքում են ձևավորվում վաղվա օրվա լիարժեք, հոգեբանորեն առողջ քաղաքացիները: Ինչպես նշեցինք, ընտանիքի հիմնական կորիզը ամուսիններն են՝ այրն ու կինը: Սակայն երբեմն նրանց հետ նույն հարկի տակ ապրում են նաև նրանց ծնողները: Ընտանիքի առանձնահատկություն է այն, որ ընտանիքը ընդլայնվում է ներսից՝ ի հաշիվ երեխայի ծննդի:

Ժամանակակից ընտանիքի տեսակներն են

1. Միջուկային - այր, կին, երեխաներ

2. Ընդլայնված - ամուսինները, երեխաները և ամուսիններից մեկի ծնողները

3 Նահապետական - ծնողները, իրենց երեխաների, թոռների ու ծոռների հետ:

Ըստ հարաբերությունների՝ ընտանիքները լինում են՝

1 Ժողովրդավարական

2 Ամբողջատիրական

Ժողովրդավարական ընտանիքներում ձևավորվում է հոգեբանական առողջ միջավայր՝ դաստիարակվում են լիարժեք, առողջ հոգեբանություն ունեցող անհատներ: Այսպիսի

ընտանիքներում են ձևավորվում դաստիարակության համար անհրաժեշտ լիարժեք պայմաններ:

Ընտանիքում կարևոր են նաև գործառույթների կատարումը:

Դրանք են՝ սերնդափոխության, դաստիարակչական, ֆինանսական, սոցիալական, տնտեսական:[1]

Ինչպես նշվեց սրանց իրականացումը ևս շատ կարևոր է ընտանիքի ամրության և լիարժեքության համար:

[1] Ս. Պետրոսյան, Ս. Խաչատրյան, Հասարակագիտություն 2014

Գլուխ 2

Երեխայի դաստիարակությունն ընտանիքում

Դարեր շարունակ երեխաները դաստիարակվել են ընտանիքում և ուսումնական հաստատություններում: Սկսած 18 - րդ դարից՝ ընտանեկան դաստիարակության առնչությամբ առաջ եկան մի քանի ուղղություններ: Առաջինի ներկայացուցիչ Պեստալոցին սովորողի համար հայրական տունը համարում էր բնական հիմք: Նա նշում էր, որ սովորողի դաստիարակությունն այստեղ տեղի է ունենում բնական ճանապարհով: Միաժամանակ նա չէր բացառում ուսումնական հաստատությունների դերը դաստիարակության գործում:

Երկրորդ ուղղության ներկայացուցիչը անգլիացի Օուենն էր: Նա առավելություն էր տալիս պետական միասնական դաստիարակությանը: Նշում էր, որ տունը և տնային դաստիարակությունը կարող են դառնալ էգոիզմի հիմք: Նոր ժամանակներում, սակայն, մեծ մտածողներն ու հոգեբաններն առաջ քաշեցին ընտանիքի, ուսումնական հաստատության և պետության միասնական կարևորությունը սովորողի դաստիարակության գործում: Ըստ դրա էլ առաջ եկավ երրորդ ուղղությունը: Սրա ներկայացուցիչները միակարծիք էին, որ միասնական պետք է աշխատեն ընտանիքը, դպրոցը և հասարակությունը: Իհարկե, հիմքն ընտանիքն է, որն ավելի լավ գիտի սովորողի առանձնահատկություններն ու նրբությունները:

Սովորողի հոգեվիճակի վրա ամուր հետք է թողնում մանկությունից ստացած դաստիարակությունը՝ մոր և հոր սիրո և հոգատարության մթնոլորտում: Միայն այս ամենի առկայության դեպքում է սովորողի դաստիարակությունը լինում լիարժեք, այլապես այն լիարժեք լինել չի կարող: Դեռ ավելին, ծնողները սեփական օրինակով պետք է դաստիարակեն երեխային, շտկեն իրենց բացասական գծերը, և միայն դրականը սերմանեն երեխայի մեջ: Սովորողների մեջ պետք է ձևավորվեն այնպիսի արժեքներ, ինչպիսիք են պատասխանատվությունը, պարտքը, հումանիզմը, շփումը մյուսների, բարեկամների հետ: Պետք է արմատախիլ արվեն էգոիզմը, կամայականությունը և այլն: Կոմենսկին ասում էր. «Երեխայի մեջ հաստատուն է կյանքի առաջին տարիներին արմատավորվածը»:[2]

Երես տալը, կամայականությունների կատարումը ծնողների կողմից ևս, բացասական հետևանքներ կթողնեն երեխայի մեջ: Դա կարող է դառնալ չարիք և կործանել երեխային՝ ըստ Ռուսոյի: Հետևաբար պետք է գտնել չափավորության այդ նուրբ սահմանը՝ միաժամանակ սիրելով երեխային՝ լինել խիստ: Մյուսն ընտանիքում երեխաների մեջ օբյեկտիվության ու արդարության պահպանումն է:

[2] Յ. Ամիրջանյան, Ա. Սահակյան, Մանկավարժություն , Երևան , 2005

«Արդարությունն ամենաուժեղ զենքն է»: / Ու.Չերչիլ/

Մյուս կարևոր նպատակը սովորողի մեջ հայրենասիրության սերմանումն է, որը պիտի ընթանա դասղեկի, դպրոցի և ընտանիքի համատեղ և հետևողական աշխատանքի շնորհիվ: Շատ կարևոր է նաև սովորողին գրականությանը, մշակութային արժեքներին հաղորդակից դարձնելը: Այդ նպատակի համար պետք է ծնողներն ավելի հաճախ կարդան: Այս ամենը սովորողի մեջ կնպաստի բարության, հոգատարության, հումանիստական արժեքների ձևավորմանը: Այստեղ ևս միաժամանակ կարևոր է զգալ չափը և սովորողին հետագայում չվերածել զոհի:

« Սեփական հարկի տակ պետք է սովորողի մեջ սերմանել հումանիզմի ծիլերը»: /Ցիցերոն/ Դա առաջին հերթին արտահայտվում է տանը՝ տան անդամի նկատմամբ, իսկ այնուհետև նաև դրսում: Սրան զուգահեռ սովորողը հենց ընտանիքում առաջին հերթին պետք է հաղորդակից դառնա բարոյական նորմերին, սոցիալականացվի: Ընտանեկան միջավայրի մի յուրահատուկ առանձնահատկությունն էլ այն է, որ ընտանիքը պիտի անդամներից յուրաքանչյուրին տա այն, ինչը պետք է իրեն և նրանից վերցնի այն, ինչը պետք է ընտանիքին: Փոխադարձ այս կապի շնորհիվ է, որ սովորողի մեջ ձևավորվում է պատասխանատվության և պարտքի զգացում ընտանիքի մյուս անդամների, ինչպես նաև հասարակության հանդեպ:

Սովորողի մեջ պետք է կարևորվի նաև Մարդ մնալու անհրաժեշտությունը, որը նույնպես պետք է սերմանվի նախ ընտանիքում և շարունակվի նաև դպրոցում:

«Աշխարհում ամենայն բարձր կողմը մարդ լինելն է»: / Թումանյան /

Կուբացի Մարտինն էլ նշում է, որ ամենադժվար մասնագիտությունը մարդ լինելն է:

Հետևաբար, սովորողը պիտի փորձի տիրապետել այս բարդ մասնագիտությանը, որի ծիլերը պիտի սերմանվեն ընտանիքում՝ լիարժեք հոգեբանական մթնոլորտում: Այս նպատակի համար պիտի սերմանել հոգատարություն, հանդուրժողականություն: Սխալի դեպքում պիտի բացատրվի սխալը մեղմ, առանց գոռալու և անհարկի կշտամբելու:

Դժվարության ենք հանդիպում, երբ երեխան ընտանիքում մեկն է լինում: Այս պարագայում ավելի հետևողական աշխատանք պիտի կատարվի երեխայի սոցիալականացման ուղղությամբ՝ օգտվելով ուսուցիչների, դասղեկի օգնությունից ու մեթոդներից:

Մաս Բ

Կոնֆլիկտներ

Գլուխ 1

Կոնֆլիկտների էությունը, տեսակներն ու հիմքերը

Կոնֆլիկտը հակադարձ միտումների, դրդապատճառների, ձգտումների բախում է, որի հետևանքով անձն ապրում է խնդրահարույց իրավիճակ:[3]

Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են: Եթե չկան վեճեր, նշանակում է ընտանիքում տիրում են սառը, պաշտոնական հարաբերություններ: Ցավոք, կան ընտանիքներ, որտեղ վեճերն անընդհատ են: Այսպիսի ընտանիքներում առաջ են գալիս քրեածին, կոնֆլիկտածին իրավիճակներ, ու այսպիսի ընտանիքները դառնում են անբարենպաստ թե՛ սովորողների, թե՛ հասարակության համար: Հիմնականում կոնֆլիկտներն առաջ են գալիս անբավարարվածության արդյունքում: Դրանք դրսևորվում են հուզական պոռթկումների ձևով: Պատճառների մեջ մեծ տեղ ունեն սոցիալական խնդիրները: Բոլոր դեպքերում կոնֆլիկտները խաթարում են ընտանիքի հիմքերը, ինչպես նաև ընտանիքի բոլոր անդամների հոգեվիճակի վրա թողնում են ցավալի հետքեր՝ երբեմն էլ դառնալով ճակատագրական: Հետևաբար, պետք է կողմերը և ընտանիքի մյուս անդամները հետևություններ անեն և փորձեն կոնֆլիկտների լուծման համար ընտրել այլ ճանապարհներ: Ավելի ցանկալի է խուսափել կոնֆլիկտածին իրավիճակներից: Այս դեպքում ընտանիքը կդառնա ավելի ջերմ, ներդաշնակ և կձգի բոլոր անդամներին: Հենց այսպիսի ընտանիքում են դաստիարակվում լիարժեք հոգեվիճակով անհատներ, որոնք հետագայում դառնում են հասարակության լիարժեք անդամներ: Լինում են դեպքեր, երբ անձը կոնֆլիկտների մեջ է հայտնվում դիմացինի դրդմամբ:

Ըստ տեսակների կոնֆլիկտները լինում են ներքին և արտաքին: Ըստ հետևանքների բաժանվում են՝ կառուցողական և ապակառուցողական: Կառուցողականի դեպքում կողմերը հանգում են դրական լուծման և վեճը վերածում բանավեճի: Որպեսզի կարողանանք խուսափել կոնֆլիկտներից, հարկավոր է այն ղեկավարել հետևյալ քայլերով.

1. Կոնֆլիկտի կանխատեսում
2. Կանխարգելում
3. Կարգավորում
4. Լուծում

[3] Ս. Պետրոսյան, Ս. Խաչատրյան, Հասարակագիտություն, Երևան, 2014

Մյուս կողմից հոգեբանները վիճող կողմերին խորհուրդ են տալիս կոնֆլիկտի ժամանակ ցուցաբերել հետևյալ ունակությունները՝

1. Զիջողականություն, 2. Հանդուրժողականություն, 3. Հարմարվողականություն

Վերոհիշյալից պարզ է դառնում, որ ամեն ինչ պետք է արվի՝ կոնֆլիկտներից խուսափելու և հանդուրժող միջավայր ձևավորելու համար՝ ի շահ սովորողի՝ վաղվա քաղաքացու:

Գլուխ 2

Հաղթահարման ուղիները: Կոնֆլիկտների ազդեցությունը սովորողների ներաշխարհի վրա

Կարծիք կա, որ կենցաղը հաճախ քայքայում է նորաստեղծ ընտանիքները: Եվ իրոք, նորաստեղծ ընտանիքները հաճախ վիճում են կենցաղային հարցերի շուրջ: Երբեմն էլ վեճերի պատճառ են դառնում անհամապատասխանությունը, խառնվածքի տարբերությունները, վատ սոցիալական պայմանները և այլն: Շատ հաճախ երիտասարդ զույգերը ենթարկվում են փորձությունների և պետք է միասնաբար հաղթահարեն դրանք: Կոնֆլիկտները գալիս են նաև ժամանակի ընթացքում: Եվ եթե զույգերը կարողանում են հաղթահարել դրանք, ապա ընտանիքն ավելի է ամրանում: Ներընտանեկան կոնֆլիկտների կողմեր են դառնում ընտանիքի անդամները: Երբեմն էլ դրանք արտահայտվում են ծնողների և երեխաների միջև: Այս պարագայում կոնֆլիկտների պատճառներ կարող են դառնալ տարիքային և մտածելակերպի տարբերությունները: Դեռահասության շրջանում սովորողը փորձում է ինքնահաստատվել, ձեռք բերել ինքնուրույնություն: Բոլոր դեպքերում մեղավոր են դառնում երկու կողմերն էլ, ովքեր համատեղ ջանքերով պետք է դուրս գան ստեղծված իրավիճակից՝ գտնելով ելքեր: Երբեմն էլ լինում են դեպքեր, երբ վեճերն ավելի են ամրապնդում ընտանիքը: Սակայն, ցավոք, քիչ չեն նաև այնպիսի դեպքեր, երբ կողմերը չեն կարողանում փոխադարձ զիջել միմյանց, լինել ներողամիտ , և ընտանիքը քայքայվում է: Եվ, ինչպես նշեցինք, հենց այսպիսի իրավիճակից խուսափելու համար անհրաժեշտ է, որ կողմերը պատասխանատվություն զգան, խելացի գտնվեն և գտնեն կոնֆլիկտային իրավիճակներից խուսափելու, կամ գոնե դրանք լուծելու այլ ուղիներ՝ հանուն ընտանիքի, իսկ նախևառաջ՝ հանուն երեխաների: Միաժամանակ էլ ավելի կարևոր է ներընտանեկան կոնֆլիկտը պահել ընտանիքի ներսում, լռել, չբարձրաձայնել, քանի որ դա ավելի մեծ հարված կլինի սովորողի ներաշխարհին:

Մակարենկոն ասում էր. «Մեր երեխաները մեր ծերությունն են: Ճիշտ դաստիարակությունը մեր երջանիկ ծերությունն է,վատ դաստիարակությունը մեր ապագա տխրությունն է, մեր արցունքներն ապագայում, մեր մեղքն է մարդկության առաջ»:[4]

Հետևաբար, մատաղ սերնդի ներաշխարհը չխաթարելու, ապագայում հասարակության առաջ անմեղ լինելու համար մենք պետք է հետևողականորեն ձգտենք ներդաշնակ, համերաշխ, հանդուրժող հասարակության ձևավորման՝ հանուն վաղվա օրվա:

[4] Յ. Ամիրջանյան, Մանկավարժություն, Երևան , 2005

Եզրակացություն

Այսպիսով, աշխատելով հետազոտական աշխատանքի վրա, բազմակողմանի ուսումնասիրելով թեման՝ օգտվելով տարբեր աղբյուրներից, հանգեցինք այն եզրակացության, որ թեման, իրոք, շատ արդիական է, նպաստում է սովորողների մեջ բազմակողմանի և ընդլայն աշխարհայացքի ու կայուն արժեհամակարգի ձևավորմանը: Փաստեցինք, որ համապատասխան անձանց միասնական, նպատակասլաց և հետևողական աշխատանքի և մեծ ջանքերի շնորհիվ է, որ հնարավոր է ձևավորել ներդաշնակ ընտանեկան միջավայր, որի առկայության դեպքում է հասարակությունը հարստանում լիարժեք անհատներով, իսկ պետությունը՝ խելացի, պատասխանատու քաղաքացիներով, ովքեր կկերտեն ապագան ու հետագայում կնպաստեն հայրենի երկրի շենացմանը:

Տարբեր մանկավարժների, փորձառու մասնագետների կարծիքն այս հարցում միասնական է այնքանով, որ նրանք բոլորն էլ մեծ կարևորություն են տալիս կրթական հաստատություններին: Եվ իրոք, ուսուցիչները, տարիների ընթացքում կերտելով սովորողի ներաշխարհը, սերմանում են դրական հատկանիշներ, որոնք հետագայում կդառնան բնավորության գծեր: Մանավանդ դասղեկը, ապահովելով դպրոց – ընտանիք կապը, ավելի մոտիկից է ճանաչում սովորողին, նրան հուզող խնդիրները և լուծում տալիս դրանց տարբեր մեթոդներով ու հնարներով:

Հուսանք, որ հայ ընտանիքներում ավելի հաճախ ներընտանեկան հարաբերությունները կձևավորվեն փոխադարձ սիրո, վստահության ու հանդուրժողականության հիմքի վրա՝ ի շահ ամուր հասարակության և պետության:

Գրականության ցանկ

1. Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան Մանկավարժություն , Երևան 2005 թ

2. Պետրովսկի Հոգեբանություն Երևան 1975 թ

3. Ս. Պետրոսյան, Ս. Խաչատրյան Հասարակագիտություն Երևան 2014 թ